ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27. 09. 2022 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Վ. Ա. Աղաբաբյան

Քարտուղար՝ Ք. Հ. Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնների 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
2. Կիրառական արվեստի ֆակուլտետի 2022-2023 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման մասին: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
3. Ամբիոններում 2022-2023 ուստարվա առարկայական փաթեթների առկայության մասին: /Զեկ. Հ. Ասատրյան/
4. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմի և մասնաճյուղի մեթոդական խորհրդում լիազոր ներկայացուցչի առաջադրում: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/
5. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում: /Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը արձանագրեց, որ կիսամյակի կտրվածքով անհրաժեշտությունը է դարձել պլանավորել ամբիոնների աշխատանքային գործունեությունը, ուսումնական գործընթացը և ամբիոնների աշխատանքները՝ ավելի կանոնակարգված և դյուրին դարձնելու նպատակով: Զեկուցողը նշեց, որ ամբիոնների աշխատանքային պլանները քննարկվել են ամբիոնային նիստերում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Տ. Բագամյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի կառուցվածքում գործող «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնների 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի 2022-2023 ուստարվա ուսումնական գործունեությունը կազմակերպված և նպատակային վարելու առումով աշխատանքային պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ: Այս փոփոխությունները թույլ են տալիս ֆակուլտետի գործունեությունը դարձնել առավել ճկուն և արդյունավետ: Զեկուցողը հայտնեց, որ աշխատանքային պլանը նախապես քննարկվել է դեկանատի նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Կիրառական արվեստի ֆակուլտետի 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Նա նշեց, որ ամբիոններում առարկայական փաթեթները հիմնականում առկա են: Ընթացքի մեջ են այն փաթեթները, որոնց ուսումնական պլաններում փոփոխություններ են տեղի ունեցել:

Բացի այդ՝ կան նաև կամընտրական առարկաներ, որոնք դասավանդվում են վերջին տարին և այդ առարկաների համար գրվել են առարկայական ծրագրեր:

Զեկուցողը կարևորեց առարկայական փաթեթների առկայությունը, քանի որ Moodle ծրագրում դասընթացների վարման ժամանակ դասավանդողները բավականին զգալու են դրա կարիքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Տ. Բագամյանը: Վ. Աղաբաբյանը: Վերջինս դասախոսներին մեկ անգամ ևս հորդորեց մինչև հոկտեմբերի վերջ e-learneng հարթակում վերջնական տեսքի բերեն իրենց կողմից դասավանդվող առարկաները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոններում առարկայական փաթեթների վիճակը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը զեկուցեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմի և մասնաճյուղի մեթոդական խորհրդում լիազոր ներկայացուցչի առաջադրման մասին՝ նշելով, որ ֆակուլտետում անհրաժեշտություն է առաջացել մեթոդական խորհուրդ և մասնաճյուղի մեթոդական խորհրդում լիազոր ներկայացուցիչ ունենալը: Այդ առումով ամբիոններում իրականացվել են քննարկումներ և առաջադրվել մեթոդական խորհրդի անդամներ **/Հավելված 1/:** Բացի այդ՝ որոշվել է մասնաճյուղի մեթոդական խորհրդում լիազոր ներկայացուցիչ առաջադրել բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ամբիոնների կողմից առաջադրված ֆակուլտետի մեթոդական խորհրդի կազմը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ Վ. Աղաբաբյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը: Նա նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել:

Զեկուցողը նշեց, որ անբավարար գնահատականներ են ստացել երկու ուսանողներ, որոնցից մեկը՝ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանող Վահե Բեգինյանը հեռացվել է համալսարանից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Տ. Բագամյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Մխիթարյան

Հավելված 1

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԱՑՎԱԾ ԿԱԶՄԸ

1. Վահան Արշակի Աղաբաբյան – դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ - նախագահ
2. Համլետ Միհրդատի Ասատրյան – «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ, դոցենտ, անդամ
3. Մհեր Օգսենի Ստեփանյան - «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի դոցենտ , անդամ
4. Քրիստինե Համլետի Մխիթարյան – «Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ, անդամ
5. Անուշ Լյուբիկի Չիբուխչյան - «Դեկորատիվ- կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի ասիստենտ , անդամ
6. Համլետ Խաչատուրի Մխիթարյան - Իջևան քաղաքի արվեստի դպրոցի տնօրեն, անդամ